



ՄԱՍԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարվանը 3 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում:

Օտարադաշտացիք դիմում են ուղղակի
Тифлис, Редакция „Маск“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն չեղվով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառից մի կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն. Հիմնական ծրագիր ձեռնարանի Ս. Էջմիածնի. Նամակ Ղուբայից. Նամակ Շամախուց. Նամակ Ղազարից. Ներքին լուրեր. — Արտաքին տեսութիւն. Անձնապատկերները Ֆրանսիայում. Նամակ Միւնխենից. Նամակ Փարիզից. Արտաքին լուրեր. — Խառն լուրեր. — Յայտարարութիւններ. — Տեղեկացոյց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԶԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1. Նպատակ ձեռնարանի Ս. Էջմիածնի է պատրաստել զեռնակրօն եկեղեցական բարեկիրթ և քաջահմուտ Աստուածաբանական ուսմանը և արտաքին կարեւոր և կենցաղաւոր գիտութեանը և լիզուաց, ի պիտու. — Զատանիայի եկեղեցոյ:

2. Շինարան Ս. Էջմիածնի պարտի լինել ընդ ծայրագոյն իշխանութեամբ կաթողիկոսի ամենայն Հայոց:

3. Շինարան Ս. Էջմիածնի պահպանի արդիւմբը Մայր աթոռոյ Սրբոյ Էջմիածնի և նուիրաբերութեամբ ամենայն Հայոց:

4. Բաց յընդհանուր վերահսկողութենէ վիճ. Վարդապետի՝ զննքին և զարտաքին կառավարութիւնն Հոգեւոր ձեռնարանի Ս. Էջմիածնի վարէ վերահստւն նորին՝ օգնականութեամբ. 1. Աւստիական և 2. Տնտեսական ժողովոյ և 3. Ընդհանուր խորհրդարանի:

5. Նախարան Ս. Էջմիածնի բաց ի վերատեսչէ, գոն օգնական վերատեսչի, ուսուցչակոյ, և ուսուցչէ. վերակարգը, բոլորի մատենադարանակոյ, քարտուղար, տնտես, և այլն:

6. Նախարանի Ս. Էջմիածնի ընդունին Հայոցն պատանիք յամենայն վիճակաց եկեղեցոյ Հայաստանից՝ և ի դաստիարակաց և յորդեոց որք և աղքատ ծնողաց, և ամեն ներեան պահպանին և ուսմանին ձրիակէս:

7. Նախարան Ս. Էջմիածնի մասնին յաւաքողէմ և ընդունակ աշակերտք աւարտալը զուսմունս իւրեանց ի վանօրայս և ի թեմական Հոգեւոր Աւստիական և ի միջնակարգ եկեղեցական դպրոցս, ըստ նախնութեաց հարցաբնութեան ի ձեռնարանի՝ համաձայն առանձին հրահանգի:

8. Հասակ ցանկացողաց մտանել ի ձեռնարան, պարտ է լինել ոչ նուազ քան 14 ամի և ոչ առաւել քան 16:

9. Շինարանն ունի վեց ըստան (գաստան) ընթացիւր (շրջանաւ) իւրաքանչիւրն միամէս:

10. Նախարանի ամենայն առարկայք և գիտութիւնք աւանդին յատկապէս ըստ սովորութեան մայրենի լիզուաւ:

11. Նախարանի աւանդին.

1. Արտագրութիւն ընդարձակ ըստ դաստիարական Հայաստանից եկեղեցոյ:

2. Պատմութիւն Հայաստանից եկեղեցոյ:

3. Ընդհանուր եկեղեցական պատմութիւն:

4. Գիտութիւն և մեկնութիւն Սուրբ գրոց:

5. Աստուածաբանութիւն տեսական, գործնական, բարոյական և բարդադասական:

6. Տոմարագիտութիւն եկեղեցական և հմբտութիւն ժամանակագրութեան:

7. Արթութիւն եկեղեցական բեմասացութեան:

8. Վարք Սրբոյ Հարց յիշատակից ի տօմարի Հայաստանից եկեղեցոյ:

9. Եկեղեցական իրաւաբանութիւն:

10. Եզգային և ընդհանուր զիցաբանութիւն:

11. Փիլիսոփայութիւն (հոգեբանութիւն և տրամաբանութիւն) և պատմութիւն փիլիսոփայութեան:

12. Եզգային պատմութիւն և Եշխարհագրութիւն:

13. Ընդհանուր և Ռուսաց պատմութիւն և աշխարհագրութիւն:

14. Թուաբանութիւն, բնագիտութիւն (Ֆիզիկա) և Տիեզերագրութիւն:

15. Բնական պատմութիւն:

16. Հայկաբանութիւն հարուստ և մատենագրութիւն Հայոց:

17. Ինքու Ռուսաց:

18. Վարդապետաց:

19. Նախնաց:

20. Յունաց:

21. Եւրոպաց:

22. Գծագրութիւն և նկարչութիւն (առաւելապէս եկեղեցական):

23. Հայնագրութիւն:

12. Աւստիական արտաշակերտք ձեռնարանի պարտին լինել յատկապէս վարդապետք և առհասարակ եկեղեցականք, և իրիւր բացառութիւն՝ ուսուցչից յազգային և ի հոգեւոր ուստիական:

13. Վասն ներքին և արտաքին կառավարութեան ձեռնարանի ունի հրատարակել առանձին ընդհանուր կանոնագրութիւն:

Վերեւում ընդօրինակուած ծրագիրը Էջմիածնական պատմելի ձեռնարանին արժան համարեցի հարգելի ձեռք:

Մեծ զարմանք է պատճառում ինձ այն՝ որ յիշատակուած ծրագիրը փոխանակ ստանալը Էջմիածնէ և կամ կարգալոյ նախ և յառաջ «Նարարատ» ամսագրում, մեք ստանում ենք ի Վոստանդուպօլսոյ և կարողում ենք Պօլսոյ պարբերական թերթերի մէջ: Սորա պատճառն ի՞նչ է: Մէջ է արդեօք որ նորակառոյց ձեռնարանի կառավարչին չեն կտակցել յայտնել ծրագիրը Ռուսիայում աղբալոց, որք գուցէ գտանեն նոյն ծրագրի մէջ անյարմար կէտեր, և կամ այլ ինչ, յառաջ քան ձեռնարանի բացուելն:

Նախարանի յիշուած ծրագրին արժան է ծանր քննութեան, ասում եմ ծանր, ըստ որում էջմիածնական ձեռնարանն լինելու է, որպէս յոյս ունին ոմանք, մեր ազգի համար իրր սղորիւր կամ սկզբնապատճառ նորոգուելու ոսկւոյն դարու Հայաստանի (?!):

Առ ժամն ես կարող չեմ չլարձուցանել ձեր ուշադրութիւնը այն կէտի վերայ՝ որ ինչպէս ասում է ծրագրիւր, էջմիածնական ձեռնարանի նպատակն է «պատրաստել զեռնակրօն եկեղեցական»: Եթէ յիշեալ ձեռնարանի զլուսւոր նպատակն լինելու է պատրաստել միայն կուսակրօն եկեղեցականք, մեծ միջութարութիւն չէ մեզ համար: Այժմ մեր ազգն ունի կարօտութիւն ըստ մեծի մասին ուստալ քահանայի, և ոչ վարդապետի, քահանայն է որ պարտ է ժողովրդի մէջ, քահանայն է որ կարող է իմանալ և հասու լինել ժողովրդի ցանկրին և պիտոյից, և ոչ վարդապետն, որ քաղաքներ մէջ բնակուելու ևս

իրաւունք չունի ըստ տէրութեան կանոնաց, այլ պարտական է միայն իւր վանքի մէջ: Ըստ իմ Էջմիածնական ձեռնարանն օգտակար լինելու էր եթէ նա իւրեան նպատակ դրած լինէր տալ իւր ուսանողաց ուսումն և գիտութիւն, և զինի ստանալոյ այդ ուսումը և գիտութիւնը՝ այնուհետեւ իւրաքանչիւր ուսանող կրնարէր իւր համար այն ասպարէզը, որ իւրեան աւելի հաւանական էր. այն է վարդապետութիւն և կամ քահանայութիւն:

Ներկորդ կէտն, որ արժանի է ըստ իմ ուշադրութեան՝ այն է ուսանելի առարկայքն: Ընդ ամենն հաշուած են նոքա 23: Այդ ոչինչ: Մեզ ցանկալի է գիտել թէ նորակառոյց ձեռնարանն, որ պիտի բանայ իւր դուռը սիպոսիթի ամուս, Սուրբ Գեորգոյ տօնի օրում, ո՞ր տեղից գտաւ և կամ պիտի գտանէ այդ ամենայն գիտութեանց ուսուցչակոյնը (չեմ ասում վարժապետք), և ո՞ր են այն մատենանք՝ որոց վերայ պիտի աւանդուին նոքա նոյն ձեռնարանին մէջ:

Տայ Աստուած՝ որ որպէս թուղթն առանց դժուարութեան ընդունում է իւր վերայ ամենայն ծրագիր, նոյնպէս և Էջմիածնական ձեռնարանն հշտութեամբ գտանէ ուսուցչակոյնը (!) և հրահանգներ... մատենանք:

3 Օգ. Մոսկուա.

Ս. Արարդի:

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՑԻՑ

«Մակի» ընթերցողներին յայտնի է օր, անցեալ տարվայ տարոնի անալոգ ծախվելուց զորած, այդտեղի տարոնատէրերը Նորին Բարձրութեան կողմէս ֆոխարքային ներկայացրել էին մի խնդիրը, որի զլուսւոր նպատակն էր աշխատել որոշել ապագայի համար՝ որքան հաւանականութիւն ունի տարոնը դեր խաղալու արուեստագործութեան մէջ: Այս հարցը վճռելու համար Ղուբայի տարոնատէրերի խնդիրը մի մասն այն էր, որ կառավարութեան հրամանով մի տեղիակ անձն ուղարկվել արտասահման և հարցը մանրամասն քննելուց յետոյ, թէ քիմիական (արհեստական) ալիզարին վերաբերութեամբ թէ գիւղատնտեսական կողմից (այսինքն տարոնի ցանքերի վերաբերութեամբ արեւմտեան Եւրոպայում) մի հաշիւ հարցում ձեռնարկվել կարողանային: Այս օրերս Բագովի նահանգապետի միջոցով Նորին Բարձրութիւնը պատասխանեց խնդրատուններին:

Պ. Կողմիակովին, Ղուբայի դաւառապետը այս պատասխանը ստանալով, յարմար համարեց իւր մօտ հաւաքել տարոնատէրերին (որոնց թիւը 50 էր համարում այս ժողովի մէջ) և կարգաւ նոքա առաջ ֆոխարքայի ցանկութիւնները: Այս նամակի գրողը նամանակէս հրաւերը ստանալով այս ժողովին մասնակցելու, իր իրաւունք է համարում լսածի մասին մի կարճ նկարագիր ներկայացնելու:

Ղուբայից իրանց խնդիրքն առաջարկելով, խոստացել էին ոչ դրամական օգնութիւն այն անձին, որ պէտք է արքունական հաշուով իւրօրայ ուղարկվէր, այլ 500 փուղ տարոն այն փորձերի համար, որ կը հարկաւորվէին գուցէ անկուղիկաբ տարոնի վերաբերութեամբ: Իսկ գուրմարը իրանց ընտրածին ուղարկելու համար, նոքա օրոշեցին 4000 ռուբլ: Նորին Բարձրութիւնը հարցը քննելուց յետոյ, որոշեց, որ օրէնքի զօրութեամբ կարելի է ուղարկվողին տալ միայն ճանապարհի ծախքը մինչև սահմանը և սահմանից մինչև նշանակված տեղը, օրական և բնակարանի փողերը, որք միասին գումարելով կը ներկայացնէին 150 պղովմագիրաւ ոսկով, բայց համակրելով այս գործին, Նորին Բարձրութիւնը բարեհաճեց չնորհել իր մասնաւոր ցանձից օրիշ 150 պղովմագիրաւ (այսպիսով գումարը հասնում էր մինչև 2000 ռուբլ) և բացի սորանից հրամայել որ Գլ-

խուրը կառավարութիւնից յանձնվէին ներկայացական նամակներ արտասահմանում գտնվող Ռուսաստանի բոլոր այն դեսպաններին և հիւպատոսներին, որոնք կը գտնվէին տարոնատէրերից ընտրած և ուղարկվող անձի ճանապարհի վերա և հետագոտութեան տեղերում: Նորին Բարձրութիւնը ցանկութիւն յայտնեց որ միայն 2000 ռուբլ, որ պահանջած գումարը պէտք է լրացնէին, հաւաքվէր նոյն ինքն տարոնատէրերի միջից: Պարոն Գաւառապետը յիշեց թէ ինկատի ունելով, որ 500 փուղ տարոնից հաշիւ թէ 50 կը հարկաւորվէին փորձերի համար, գուցէ պ. պ. տարոնատէրերը համաձայն կը լինէին նուիրել միայն 450 փուղը փոխանակ դեռ հարկաւորվող 2000 ռուբլի: Նա նամանակէս պարոնների ուղարկութիւնը դարձրեց այն հարցերի վերա, որոնք նոքա դեռ ունեն վճռուելու՝ այն է ինչ նպատակով պէտք է գնայ ներքինից ուղարկվածը՝ զլուսւորապէս ծանօթանալ օտար տարոնացանքերի հետ, թէ հետագոտել արհեստական ալիզարինը, որ տարոնի թշնամի լինելով, պէտք է իւր բոլոր յատկութիւններով ծանօթ դառնայ տարոնատէրերի համար: Նպատակը որոշելուն պէս, նա կարծում է որ պէտք է վճռվէր ով է այն յարմար անձը, որ կարող կը լինի խղճմտաբար կերպով կատարել իւր վերա դրած պարտաւորութիւնը, որովհետեւ նախկին ընտրած պ. Կոլարինովը այս յանձնարարութիւնը կատարելուց հրաժարվել էր, պատճառ բերելով օտար լիզուներին անտեղեակ լինելը:

Տարոնատէրերը վճռեցին դեռ իրանց մէջ ժողովի և պ. գաւառապետին յայտնել իրանց վճռիւր:

Ցաւում եմ որ այս հարցը չը վճռված, ես պէտք է Ղուբա թողնէի, բայց յոյս ունեմ որ մի այլ անձն կը գտնվի, որ «Մակի» կը հաղորդէ այս ժողովներին հետանքը:

22 Յուլիսի

Ա. Արարդի

ՆԱՄԱԿ ԵԱՄԱՌՈՒՑ

Յայտնի է, որ դատաստանական վերանորոգութեան գաղափարը ի չար գործ դնելով, մի քանի կալուածատէր—բէկեր, որոնց կալուածքը արքունական հողերին կից է, տարից տարից տարածելով իրանց իրաւունքը, թէ իրանց ապագայն չհասկացող գիւղական հասարակութեանը կաշառելով և կամ թէ այլ անաղիւր միջոցներ գործ դնելով, արքունական հողերի վերա ինքնակոյ տէր են ներկայանում, տարածելով իրանց ապօրէն իրաւունքը հողի վերա: Պարզ բան է, որ այդ իրաւունքը բէկը հիմնում է դատաստանի առաջ վեցանասայ, մինչև բոլոր բացելը, հողին տիրելու վերա կաշառված վկաների միջնորդութեամբ, որոնք ճարելը շատ դիւրին է ամէն մի կալուածատիրոջ համար: Դորա պատճառը հարկաւոր է որոնել նորանում, որ կառավարութիւնը այս կամ այն հողի վերա իւր տեղեկութիւնը ժողովելու համար, նախապէս ստիպված է դիմել նոյն իսկ գիւղացիներին, որոնք պիտի դատել կանգնեն բէկերի հետ: Այս գիւղացիները թէն տեղեկութիւն հաւաքելու ժամանակ հաղորդում են փոքր ինչ թերի տեղեկութիւններ յայտնի հողի համար և մինչև անգամ յայտնում են իւրեանց պատրաստակաւութիւնը դատաստանի առաջին իւրեանց հաղորդածները մի ըստ միով ճշմարտապէս վկայել, սակայն երբ գալիս է ժամը, նոքա մեծութեան ամէնը, ցոյց տալով բէկի կողմը: Սորան ապացոյց թող ներվի մեզ յիշել այստեղ մօտ ժամանակում մեզ հետ պատճառ մի քանի գիւղացոյց այս առթիւ խօսակցութիւնը: Նոքա պարզ խոստովանում էին, թէ նորանց համար ամենեկին ձեռնտու չէ բէկի կողմը ստել: Նախ այն պատճառով, որ բէկերը միշտ օգնում են նորանց թէն մեծ տոկոսներով ձեռապարտք տալով, որը նոքաքանք էր դնում կամ իւրեանց կենքի պիտոյքներին համար, կամ արքունական զանազան հարկերը վճարելու համար, — երկրորդ՝ որ բէկերի համար դատաստանի առաջին, հողին տիրելու և 6 ամսեայ իւրեանց իրաւունքը հաստատել ոչինչ է, երբ այդ հաստատութիւնը հիմնված պիտի լինի միայն վկաների միջակցութեամբ,

բաղդաւոր, հարուստ, հասարակութեան մէջ

Ի. ԺԱԲԱ

Մ. Պիկոլաբով: 3 (4)



Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ